Յուրի ՀՈՎԱԿԱՆՅԱՆ

Փիլիսոփայական գիտությունների թեկնածու, դոցենտ

1976 թ. ավարտել է ԵՊՀ պատմության ֆակուլտետը՝ «Փիլիսոփայություն» մասնագիտությամբ: 1987 թ. ստացել է փիլիսոփայական գիտությունների թեկնածուի աստիճան, 1990 թ.՝ դոցենտի կոչում: 2019 թ. օգոստոսին նշանակվել է ՀՊՏՀ փիլիսոփայության և հայոց պատմության ամբիոնի վարիչի պաշտոնակատար: Հեղինակ է 6 մենագրության և ավելի քան 40 գիտական հոդվածների:

https://orcid.org/0000-0002-6503-4872

ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹՅՈՒՆԸ՝ ՄԵՐ ԱԶԳԱՅԻՆ ՈՂԲԵՐԳՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

DOI: 10.52174/2579-2989_2024.1-86

Սարսափելի է Աստված՝ առանց բարոյականության:
Ի. Կանտ

Հիմնաբառեր. *ազգ, կրոն, քրիստոնեություն, եկեղեցի, աշխարհաքաղաքացի, ազգային ոգի, ինքնություն, դավադրություն, պետականության կորուստ, ազգային ողբերգություն*

Մասնագիտական գրականության մեջ քրիստոնեության պետականացումը Հայաստանում հիմնականում դիտարկվում է պետականության և ազգային ինքնության պահպանման տեսանկյունից, ներկայացվում որպես քաղաքական ու մշակութային նվաճում… Չհերքելով կրոնի և եկեղեցու դերը ազգային արժեքների՝ լեզվի և մշակույթի, հետևաբար նաև ազգային ինքնության պահպանման հարցում[1], հատկապես պետականության չգոյության պայմաններում՝ հեղինակը փորձում է հիմնավորել, որ մեր ազգային դիցարանը, որը համահունչ էր մեր էությանը, ամենևին չէր սպառել իրեն, ուստի դրա վերացման անհրաժեշտությունը չկար: Չկար նաև քրիստոնեության ընդունումը պարտադրելու անհրաժեշտություն: Մեր կատարելատիպը վահագնապաշտ Արմենական հայն էր՝ ռազմատենչ, ազատասեր և հայրենապաշտ, որ պատմությանը, ժամանակին և միջավայրին կարողանում էր պարտադրել իր կամքը՝ Միջերկրականից մինչև Կասպիականն ընդգրկող կայսրություն ստեղծելով:

Ազգային դիցարանի, տաճարների և տաճարական մշակույթի ոչնչացումն ուղղված էր Արմենական հայի դեմ: Քրիստոնեությունը, հեղինակի կարծիքով, կարող էր լինել միայն արտաքին քաղաքական դավադրության արդյունք: Նպատակն էր տարածաշրջանում արիական ռասայի գերակայությանը վերջ տալը և հայերին ազգակից ժողովուրդներից կտրելու ճանապարհով տարածաշրջանից դուրս մղելը… Ինչը և կատարվեց ամբողջությամբ:

[1] Տես Հովականյան Յու., Կրոնի և եկեղեցու դերը ազգերի ձևավորման ընթացքում, «Բանբեր ԵՊՏՀ», 2012, №3, էջ 143 – 157:

Ինչպես կրոնական, այնպես էլ պատմագիտական գրականության մեջ, սկսած պատմահայր Խորենացուց, Ագաթանգեղոսից, Բուզանդից, մի առանձնակի հպարտությամբ է նշվում, որ առաջինը մենք՝ հայերս ենք ընդունել քրիստոնեությունը՝ որպես պետական կրոն, և, դա դարձնելով պատվի և արժանապատվության հարց, պատրաստ ենք եղել կենաց ու մահու կռիվ սկսել բոլոր նրանց դեմ, ովքեր կասկածում են դրանում: Ընդ որում, չբավարարվելով պաշտոնապես ընդունված թվականով, ավելի ենք խորանում, իջնում մինչև մ. թ. 60-ական թվականները և քրիստոնեական դավանաբանության տարածումը Հայաստանում կապում երկու հրեա առաքյալների՝ Թադեոսի և Բարդուղիմեոսի գործունեության հետ, նշելով, որ երբ Հիսուսն արդեն երկինք պիտի համբարձվեր, իր աշակերտներին պատվիրեց. «ինչպէս Հայրը ինձ ուղարկեց, ես էլ ձեզ եմ ուղարկում: Գնացէք այսուհետեւ ձեզ աշակերտ դարձրէք բոլոր հեթանոսներին եւ մկրտեցէք նրանց Հոր, Որդու եւ Սուրբ Հոգու անունով» (Մաթ. ԻԸ 19), և հավաստում, որ այդ երկու առաքյալները քրիստոնեության առաջին ուսուցիչները եղան Հայաստանում, որ հեթանոսական «ցոփ ու շվայտ կենցաղավարության, կռապաշտության խավարի մեջ թաղված» երկրում քրիստոնեության «առաջին հիմնաքարերը» դրեցին ու «ճշմարիտ լույսը» սփռեցին հայ ժողովրդի վրա…

Այն, որ յուրաքանչյուր կրոն հենվում է որոշակի առասպելների վրա, միանգամայն բնական է: Բնական է նաև այն, որ յուրաքանչյուր կրոն իր Աստծո հետ է կապում աշխարհի ու մարդկության արարչությունը և իր դավանաբանությունը համարում միակ ճշմարիտը: Քրիստոնեությունը, լինելով հրեական միջավայրի արդյունք, բնականաբար, հենվում է հրեա ժողովրդի պատմության ու առասպելների վրա և չի կարող ուղեցույց լինել մեկ այլ ժողովրդի համար: Եվ եթե անգամ ճշմարիտ է, որ աստվածներն են ստեղծել աշխարհն ու մարդուն, ճշմարիտ է այնքանով, որ քրիստոնեության աստվածը կարող էր ստեղծել միայն հրեային՝ իր պատկերով ու իր նմանությամբ: Յուրաքանչյուր ժողովրդի արարիչը սեփական ազգային աստվածներն են, և միայն նրանք կարող են ստեղծել սեփական ժողովրդին՝ իրենց պատկերով ու նմանությամբ: Այլ հարց է, որ դա չի գիտակցվում:

Այս հոդվածի նպատակն աստվածամերժությունը չէ, ոչ էլ քրիստոնեության՝ որպես կրոնի և դավանաբանության վերլուծությունը: Քրիստոնեությունը համամարդկային բարձր արժեք է, ինչպես համաշխարհային մյուս կրոնները՝ բուդդայականությունն ու իսլամը: Դա աներկբա է: Մենք պարզապես փոձելու ենք հետադարձ հայացք ձգել մեր ազգային պատմությանը ու հասկանալ՝ ինչ տվեց մեզ քրիստոնեությունը, և ինչ կորցրինք՝ հրաժարվելով մեր ազգային աստվածներից ու դավանաբանությունից… Եթե ինչ-որ մեկը ենթադրում է, որ քրիստոնեության ընդունմամբ հայ ժողովուրդը ձեռք է բերել ավելի բարձր քաղաքակրթություն ու մշակույթ, նշանակում է՝ նա պարզապես անծանոթ է ինչպես համաշխարհային, այնպես էլ սեփական մշակույթի պատմությանը: Եթե ինչ-որ մեկը կարծում է, որ քրիստոնեության բարոյական արժեհամակարգն ավելի վեհ է, դարձյալ պիտի հիասթափեցնենք, քանի որ դա նույնպես կրոնական մոլեռանդության և տգիտության արդյունք է… Կրոնական բոլոր գրքերը սրբազան են և, որպես այդպիսիք, ուսուցողական և դաստիարակող… Այլ բան է, որ բոլոր կրոնների նպատակը մեկն է. ինչպես կասեր Ֆ. Նիցշեն, մարդուն կառավարելի, ինչու չէ, նաև «հիվանդ» դարձնելը:

Ինչքան էլ որ հայ եկեղեցու քարոզիչները հիմնավորեն քրիստոնեության ազգայնացման գաղափարը և խոսեն հայկական եկեղեցու զուտ ազգային բնույթի մասին, այնուամենայնիվ, քրիստոնեությունն իր էությամբ, պարզապես չի կարող ազգայնանալ, քանի որ մերժում է ազգի ամենակարևոր բաղադրիչը՝ Հայրենիքի գաղափարը: Քրիստոնեությունը մերժում է նաև ցեղային արժեքները: Հեթանոսական աստվածներն ապահովում էին ցեղի նույնականությունը, իսկ ցեղը՝ ցեղամարդկանց: Կենսաբանական և սոցիոմշակութային ժառանգությունն ապահովում էր ցեղի շարունակական նույնականությունը, սերունդներն իրենց նույնականացնում

էին իրենց նախնիների հետ, անցյալի ներկայությունը հավաստում էր ներկայի որոշակիությունը, և այդպիսով՝ անցյալը և ներկան կազմում էին մի անբաժանելի ամբողջություն[2]: Հեթանոսության շրջանում հայը նա էր, ով ապրում էր Հայաստանում, խոսում հայերեն, հետևում իր նախնիների ավանդույթներին ու սովորույթներին, պաշտում իր ցեղի աստվածներին և զոհվում՝ հանուն նրանց, եթե ծագում էր դրա անհրաժեշտությունը: Քրիստոնեության ընդունմամբ ազգության հարացույցը փոխվում է: Ինքնության քրիստոնեական հարացույցում «բնօրրան», «հայրենիք», «ցեղ» հասկացությունները կորցնում են իրենց նշանակությունը: Այն հարցին, թե ով է ինքը, հայը պատասխանում է. «Ես քրիստոնյա եմ», իսկ դա նշանակում է, որ ինքն իրեն համարում է Քրիստոսի զավակը, քրիստոնեական համայնքի անդամ, քրիստոնեական արժեքների կրող՝ անհող, անհայրենիք աշխարհաքաղաքացի: Նոր հավատքը փոխում է մարդկանց զգայական ու մտավոր աշխարհի բովանդակությունն ու ուղղվածությունը, և ձևավորվում է մի աշխարհայացք, որում, երկրային արժեքների փոխարեն, հիմնակետային են դառնում երկնային, հոգևոր արժեքները: Ահավասիկ, Ավետարանի հավատքի քրիստոնյաների «Հոն է մեր տուն» հոգևոր երգը, որտեղ քրիստոնյա հայն իրեն «թափառական պանդուխտ» է համարում երկրի վրա, հայրենիքը՝ «օտար», հետևաբար՝ «Աշխարհը երբեք նրան հանգիստ չի խոստանա»: Եվ նա երգում է միակ և իրական հայրենիքի մասին՝ գովաբանելով դրա «հավետ սիրուն և եդեմազարդ» երկինքը. «Երկինքն է մեր հայրենիքը, // Հազար դրախտ, հազար դրախտ, // Հազար երանգ, ծառ ու ծաղկունք // Եդեմազարդ, եդեմազարդ[3]:

Ինքնության քրիստոնեական հարացույցի կենտրոնական խորհրդանշանը եկեղեցին է, որի շուրջ են համախմբվում հավատացյալները: Այսինքն՝ եկեղեցին փոխարինում է պետությանը, հայրենիքին, իսկ հավատքն ու դավանանքը՝ ազգակցությանը: Դա ենթադրում է, որ կարևորը ոչ թե Հայրենիքի կամ Ազգային պետության պահպանումն ու հզորացումն է, այլ Եկեղեցու: Աշխարհիկ պետության մեջ ձևավորվում է հոգևոր պետությունը, որին էլ աստիճանաբար անցնում է իրական իշխանությունը, որը, եթե անգամ ցանկանում է պահպանել աշխարհիկ պետությունը, ապա, առնվազն, ձգտում է իրեն ենթարկել դա: Եվ նրանք, ովքեր փորձում են հիմնավորել, որ դեռևս II–III դարերում տեղի է ունեցել քրիստոնեական եկեղեցու ազգայնացում և, որ Ագաթանգեղոսն իր «Պատմության հայոց»-ի մեջ խոսում է ազգային եկեղեցու մասին, մեղմ ասած, այնքան էլ իրավացի չեն, քանի որ գիրքն ավարտվում է հետևյալ խոսքով. «Հավատում ենք ու խոստովանում համաշխարհային և սուրբ կաթուղիկե եկեղեցուն…»[4]:

Փաստորեն, ինչքան էլ ժամանակին փորձ է արվել խմբագրելու Ագաթանգեղոսի պատմությունը, այնուամենայնիվ, դրանում պահպանվել է ամենաէականը՝ եկեղեցին դեռ իրեն տեսնում էր կաթողիկե, ընդհանրական՝ ուխտի և կառուցվածքի մեջ, այսինքն՝ ապազգային: Պատահական չէ, որ Եղիշեն հայերին անվանում է ոչ թե Հայկի սերունդ՝ իր ցեղային ինքնությամբ, այլ քրիստոնյա ազգ, որի ծնողներն են սուրբ ավետարանը և ընդհանրական քրիստոնեական եկեղեցին. «Որովհետև մեզ հայր ենք ճանաչում սուրբ ավետարանը, և մայր՝ քրիստոնեական կաթողիկե եկեղեցին. թող ոչ ոք իբրև չար անջրպետ մեջ ընկնելով՝ մեզ սրանից չբաժանի»[5]: Արդ, Աստվածաշունչը և ընդհանրական քրիստոնեական եկեղեցին ոչ միայն «ծնողներ» են, այլև բացարձակ, աստվածապարգև արժեքներ: Հետևաբար՝ հրաժարվել Աստվածաշնչից և ընդհանրական քրիստոնեական եկեղեցուց, նշանակում է հրաժարվել սեփական ինքնությունից: Դրանք անքակտելիորեն միահյուսված են և երբեք չեն կարող բաժանվել: Շարունակելով իր միտքը՝ Եղիշեն գրում է. «Այս հավատից

[2] Այս մասին տես նաև Զաքարյան Ս., Հայոց ինքնության քրիստոնեական հարացույցը (ձևավորման և կայացման փուլ), http://lib.ysu.am/disciplines_bk/88f0ed0db2f876b9e98d276050aa174a.pdf
[3] Հոգևոր երգարան, ԱՀՔ Եկեղեցի, երգ 342, http://www.ergaran.in/2016/01/342.html
[4] Ագաթանգեղոս, Պատմություն հայոց, Եր., 1983, էջ 501:
[5] Եղիշե, Վարդանի և հայոց պատերազմի մասին, Եր., 1969, էջ 135:

մեզ ոչ ոք չի կարող խախտել, ո՛չ հրեշտակները և ո՛չ մարդիկ, ո՛չ սուրը և ո՛չ հուրը, ո՛չ ջուրը և ո՛չ էլ որևէ այլ դառը հարված»[6]:

Սակայն, զավեշտը նրանում է, որ, կրոնով և դավանաբանությամբ «մեկուսացման» շնորհիվ, հայ ժողովուրդը, որը քրիստոնեություն էր ընդունել ազգային ինքնությունը և անկախ պետականությունը պահպանելու ձգտումով, ինչպես ներկայացնում են քրիստոնեության ջատագովները, իրականում, երբեք միասնական ու միակամ չեղավ քրիստոնեական ընդհանուր եկեղեցու հետ, նախ՝ Քաղկեդոնի տիեզերաժողովի որոշումները մերժելով, իսկ հետո՝ դավանաբանական և ծիսական որոշակի տարբերություններ մտցնելով, որոնց հետևանքով ուղղադավան և կաթողիկե եկեղեցիները մշտապես եղան նրա հակառակորդը և թշնամին, ու այդ թշնամանքը շատ հաճախ գերազանցում էր իսլամի նկատմամբ ունեցած թշնամանքը, ինչը և ճակատագրական դեր խաղաց մեր ազգային գոյապայքարի ամբողջ ընթացքում:

Դժվարանում ենք ասել՝ իրավացի են արդյոք նրանք, ովքեր պնդում են, թե հեթանոսական կրոնը սպառել էր իրեն, կորցրել իր հեղինակությունը, և այդպիսով փորձում են հիմնավորել քրիստոնեության պետականացման անհրաժեշտությունը: Եթե հենվում ենք Ագաթանգեղոսի վկայության վրա, ապա հայերի թիվը քրիստոնեության ընդունման շրջանում եղել է ութ միլիոն: Նրանցից միայն չորս միլիոնն է ընդունել քրիստոնեություն, ընդ որում՝ հարկադրաբար, իսկ մյուս չորս միլիոնը՝ հավատարիմ իր ազգային դիցարանին, կամ հեռացել է Հայաստանից, կամ զոհվել նոր դավանանքը պարտադրող հունա-հռոմեական զինվորների հետ բախումների ընթացքում: Եթե դա ընդունում ենք որպես իրականություն, նշանակում է՝ հայ ժողովրդի առնվազն կեսը՝ չորս միլիոնը, մինչև վերջ հավատարիմ է մնացել իր ցեղային աստվածներին: Հետևաբար՝ քրիստոնեության մուտքը Հայաստան առնվազն պետք է դիտարկել որպես դավադրություն՝ հայկական պետականությունը ոչնչացնելու, գուցե նաև հետագայում Պաղեստինը նվաճելու համար ճանապարհ հարթելու միանգամայն հեռահար նպատակով: Եվ այս առումով, որպես դավադրության շարունակություն, պետք է դիտարկել նաև եկեղեցիների տրոհումն ըստ դավանաբանության և ծիսակարգի: Կեղծ բարեպաշտներին և մոլեռանդ հավատացյալներին, որպես ասվածի հիմնավորում, ուզում ենք պարզապես հիշեցնել երեք հրայի անուն՝ անգլիացի Արթուր Լեմլի Դևիդ, ֆրանսիացի գրող Դավիդ Լիոն Կոգան և հունգարացի Արմինիուս Վամբեր: Նրանք էին, որ իրենց ստեղծագործություններով թուրք ժողովրդի մեջ արթնացրին ազգայնականությունը, հրահրեցին թուրք-արաբական հակամարտությունը՝ արաբներին միայնակ թողնելով համաշխարհային հրեության դեմ և դրանով իսկ ապահովեցին Պաղեստինի հրեականացումը, որը, կարելի է ասել, կատարյալ ձևով հաջողվեց: Հետևաբար, հայցելով մեր հավատացյալ հայրենակիցների ներողամտությունը, ուզում ենք ասել, որ ավետարանիչներն ընդամենը սիոնիզմի նախակարապետներն էին, և ոչ ավելին: Կարծում ենք՝ ունենալով Տիգրան Մեծի օրինակը՝ նրանք համոզված էին (իհարկե, ոչ անտեղի), որ Պաղեստինը և Երուսաղեմը նվաճելու համար անհրաժեշտ է վերացնել հայկական գործոնը՝ Արմենական հային վերածելով հայ քրիստոնյայի, այսինքն՝ նրան դարձնելով թույլ, մեղավոր, հիվանդ, աստվածային փրկության կարոտ…

Վերոնշյալ հանգամանքը նկատել է նաև Ֆ. Նիցշեն, որը, գուցե, հայ ժողովրդի պատմությանն ու մշակույթին ծանոթ էր մակերեսորեն, թերևս, այնքան, որքան տեղյակ էր հունական անտիկ մշակույթին ու պատմությանը կամ հույն ժողովրդի մշակութային ու քաղաքական առնչություններին: Համենայն դեպս, նա արձանագրել է հետևյալը. «Նույնիսկ արիական ցեղի այնպիսի վառ ներկայացուցիչների, ինչպիսիք հայերն են, քրիստոնեությունը ստիպեց հայտնվել իրենց ցեղին միանգամայն անհարիր համակերպվողի իրավիճակում՝ պատրաստ ենթարկվելու օտարի կամքին: Այն մեկ հարվածով վերջ դրեց հսկայական

[6] Նույն տեղում, էջ 81:

մշակութային փառքի և շլացուցիչ վեհության տեր այս ցեղին»[7]:

Պաղեստինում՝ հրեական միջավայրում ծնունդ առած այս կրոնը ժամանակի ընթացքում հիմնավորվեց հունական հեթանոսական փիլիսոփայության մեջ՝ շնորհիվ Կղեմես Ալեքսանդրիացու և նրա աշակերտ Որիգենեսի, որոնք միջնորդ դարձան հունական փիլիսոփայության ու քրիստոնեության միջև՝ դրանք մոտեցնելով իրար: Հույն մեծ մտածողներից մի քանիսը, հատկապես Պլատոնը և Արիստոտելը հռչակվեցին իբրև քրիստոնեության կողմնակիցներ ու նախակարապետներ, և նրանց աշխատությունների ուսումնասիրությունն աստվածահաճո պարապմունք դարձավ եկեղեցու հայրերի համար: Այսինքն՝ ծընված լինելով հրեության ծոցում, այս կրոնը, հունական փիլիսոփայության հետ սերտաճման շնորհիվ, ձեռք բերեց արևմտյան ոգի և, փաստորեն, Հայաստանում դարձավ արևմտյան ուղղվածության գաղափարախոսություն՝ ի հակադրություն արևելյան կրոնների (զրադաշտականություն, մանիքեականություն), ինչպես նաև ազգային դիցարանի՝ դաժան ու անխնա պատերազմ մղելով հայ հեթանոսության դեմ: Այս տեսանկյունից, չի կարելի չհամաձայնել Լեոյի հետ. «Որքան էլ հրաշաբան և ջատագովական լինեն Գրիգորին նվիրված վկայաբանությունները, բայց նրանց մեջ մենք շատ քիչ ենք պատահում քրիստոնեական ճշմարիտ առաքելություն, այսինքն, որ Գրիգորը խաղաղ քարոզչական գործունեությամբ մշակած լիներ հայերի սիրտը՝ նոր վարդապետությունն ընդունելու համար: Նա խոսքի ուժով իր հետևից չէր քաշում անհատներ և ժողովրդական զանգվածներ, չէր հարուցանում գաղափարական շարժում: Մեծ հեղափոխությունը մտնում էր Հայոց աշխարհ վերևից դեպի ցած: Դա արքունիքի, զորքի, ավատական տիրողների հեղափոխությունն էր: Եվ ուրիշ կերպ, իհարկե, չէր կարող լինել մի երկրում, ուր ժողովուրդը անգիտակից ստրուկ էր, ձայնից ու նշանակությունից զուրկ»[8]:

Շարունակելով իր միտքը՝ Լեոն նկատում է, որ «նոր կրոնը» թագավորական զորքերի աջակցությամբ ճակատամարտեր էր մղում հեթանոսության միջնաբերդի՝ մեհյանների դեմ. «Քանդել, ոչնչացնել ամեն ինչ, որ վերաբերվում է հնության, հավասարեցնել հողին ամեն մի հիշատակ – այսպես էր խաչի արշավանքների նշանաբանը Հայաստանում»: Հեթանոսությունն էլ, իր հերթին, դուրս եկավ կռվելու անողոք թշնամու դեմ՝ զինվելով հայրենի ավանդույթների հեղինակությամբ: Բայց մեհյանների դիմադրությունն ապարդյուն էր. «Հայ քրմությունը թեև շատ ուժեղ կազմակերպություն ուներ, թեև աստվածների պաշտոնեության խիտ շարքեր էր դուրս հանում հարձակվողների դեմ, սակայն վերջ ի վերջո տեղի էր տալիս և փրկություն էր որոնում փախուստի մեջ»[9]:

Մասնագիտական գրականության մեջ շրջանառվում է այն ընդհանրական տեսակետը, թե իբր հայերը քրիստոնեությունն ընդունել են հռոմեամետ ու պարսկամետ քաղաքական կողմնորոշումները հաղթահարելու, երկպառակությունների և կենտրոնախույս միտումների խորացումը կանխելու, ազգի բոլոր հատվածներին և խավերին մեկ միասնական գաղափարի՝ քրիստոնեական Աստծո շուրջ միավորելու, կենտրոնացված թագավորական իշխանության ամրապնդման և ազգային ինքնությունը պահպանելու նպատակով:

Որպես տեսակետ, անկասկած, վերոնշյալը ոչ միայն կարող է գոյություն ունենալ, այլև ընդունելի լինել: Սակայն, երբ նկատում ենք, որ քրիստոնեությունը Հայաստան է մտել ասորի ու հրեա հոգևորականների և հռոմեական զենքի ուղեկցությամբ, բացատրելի է դառնում այն դաժան ու անզիջում թշնամանքը, որ դրսևորվում էր հեթանոսական տաճարների, դրանցում ամբարված հոգևոր և նյութական հսկայական մշակութային հարստության և քրիստոնեությունը մերժող հայության հանդեպ, և սկսում ենք կասկածել այդ տեսակետի ճշմարտացիությանը: Կասկածելի է դառնում նույնիսկ հայագիտության մեջ ընդունված այն տեսակետը, թե «քրիստոնեության հաղթանակը Հայաստանում ամենից առաջ հռոմեական կողմնորոշում ունե-

[7] Фридрих Ницше, 1879, "Vermischte Meinungen und Sprüche"; https://ok.ru/vsyaarmeni/topic/66912194532640
[8] Նույն տեղում, էջ 421:
[9] Նույն տեղում, էջ 421:

ցող թագավորի և նախարարների հաղթանակն էր», որ «Տրդատ Գ -Մեծի ժամանակվանից արդեն քրիստոնեական եկեղեցին դառնում է Հայաստանի ու Հռոմեական կայսրության քաղաքական մերձեցման կարևորագույն օղակներից մեկը»[10]: Նախ՝ կարելի՞ է, արդյոք, թագավորի և նախարարների հաղթանակ համարել մի հեղափոխություն, որի հետևանքով շեն ու հզոր պետությունը վերածվեց ավերակի, իսկ ազգաբնակչության, այսինքն՝ հպատակների գրեթե կեսը կամ զոհվեց այդ անիմաստ պատերազմում, կամ լքեց իր հայրենիքը: Երկրորդ՝ արդյո՞ք քրիստոնեական եկեղեցին կարող էր քաղաքական մերձեցման հիմք հանդիսանալ Տրդատ Գ Մեծի և հռոմեական կայսրության միջև: Համոզված ենք՝ երկու դեպքում էլ ընդհանրացումը, մեղմ ասած, ճշմարիտ չէ: Հռոմեական կայսրությունն ավելի մերժողական և անհանդուրժողական էր քրիստոնեության ու նրա գաղափարաբանության հանդեպ, որի արդյունքում էլ քրիստոնեական համայնքները հաստատվել էին հիմնականում Հայաստանում և Պարսկաստանում:

Հետևաբար՝ եթե անգամ ընդունում ենք, որ «պատմական այս իրադարձությունը հիմք ստեղծեց ինչպես զրադաշտական Պարսկաստանից, այնպես էլ դեռևս հեթանոսական Հռոմից գաղափարաբանական սահմանազատման, իսկ միջնորդավորված ձևով՝ նաև քաղաքական ինքնուրույնության ու անկախության համար, որոնք պետականության պահպանման և ինքնուրույն պետական քաղաքականություն վարելու հիմքերն էին», ապա առնըվազն վիճելի ենք համարում հարգարժան պրոֆեսորներ Ս. Արևշատյանի և Կ. Միրումյանի ընդհանրացումն առ այն, թե «քրիստոնեությունն առաջին հերթին կոչված էր գաղափարախոսական միասնական (միաստվածության) հիմքի վրա ամրապնդել երերուն պետական ամբողջականությունը», և որ «այդ ամենը ազգային–պետական ինքնուրույն քաղաքականություն վարելու և՛ հոչակումն էր, և՛ գաղափարախոսական հիմնավորումը»[11]:

Նախկին կրոնը գործնականում արդեն իսկ ապացուցել էր, որ ընդունակ է ոչ միայն պետական ամբողջականության գաղափարախոսություն լինել, այլև կայսրության հիմք ստեղծել… Եվ մի՞թե դա չի հաստատում նաև պատմահայր Խորենացին՝ արձանագրելով այն փաստը, որ Տրդատ Մեծի հայր Խոսրով Մեծը հալածել է քրիստոնյաներին ոչ թե Վալերիանոս II հռոմեական կայսեր թելադրանքով, այլ ինքնուրույն՝ զրադաշտականության հիմքն ամրապնդելու և ազգի ուժերը մեծ պատերազմի շեմին համախմբելու համար: Ուշագրավ է, որ մասնագիտական գրականության մեջ այս խնդրին ոչ ոք կարևորություն չի տվել: Եթե պատմահայրը վկայում է, որ Խոսրով Մեծը հալածել է քրիստոնյաներին (գուցե Վալերիանոս II հռոմեական կայսեր թելադրանքով)՝ հիմնականում զրադաշտականության հիմքն ամրացնելու նպատակով, արդյո՞ք տրամաբանական չէ, որ նրան սպանելն ամենևին ձեռնտու չէր ո՛չ հռոմեացիներին, ո՛չ էլ պարսիկներին: Հետևաբար՝ վիճահարույց է Ագաթանգեղոսի պնդումն առ այն, թե Անակը սպանությունը կատարել է՝ «հանկարծ հիշելով» Արտաշիրին տված իր երդումը[12]: Բնականաբար, չհերքելով կամ չհաստատելով Խոսրով Մեծ – Արտաշիր քաղաքական հակասությունների և թշնամանքի առկայությունը, կարծում ենք՝ այստեղ կարող էր լինել մեկ այլ և ավելի արմատական դավադրություն՝ ուղղված արիական ցեղի դեմ, որի մասին ակնարկներ կան Հին Կտակարանում և որին վախվորած ձևով հաճախ անդրադառնում են պատմաբանները: Դավադրություն, որը քրիստոնեության տարածումից հետո Մերձավոր Արևելքը վերածեց պատերազ-մական թատերաբեմի, և հայ – պարսկական արիացեղ հարաբերությունները դարձան թշնամական, և այնտեղ այլևս երբեք չէին իշխելու միությունն ու խաղաղությունը…

Նաև այդ պատճառով էր Նիցշեն քննադատում քրիստոնեությունը: «Ունենալով հրեական արմատ և հասկանալի

[10] Հայ ժողովրդի պատմություն, հ. 2, էջ 76-77:
[11] Արևշատյան Ս., Միրումյան Կ., Հայ միջնադարյան փիլիսոփայություն, մաս Ա, Հին շրջան և վաղ միջնադար, Եր., 2014, էջ 73:
[12] Ագաթանգեղոս, նշվ. աշխ., էջ 30:

լինելով լոկ իբրև այդ հողի բույս, ներկայացնում է հակաշարժումը բուծման, ռասայի արտոնության ցանկացած բարոյականության դեմ,- դա հիմնականում հակաարիական կրոն է. քրիստոնեությունը բոլոր արիական արժեքների վերարժեքավորումն է, չանդալայի արժեքների հաղթանակը, խեղճերին, ցածր մարդկանց քարոզված ավետարանը, ողջ ոտքի տակ տրվածի, թշվառականի, չստացվածի, տուժածի համընդհանուր ապստամբությունը «ռասայի» դեմ,- չանդալայի անմեռ վրեժը՝ իբրև սիրո կրոն»[13],- գրում է նա: Եվ ահա այդ «տեսական» և «ստրուկ» ժողովուրդն ապստամբեց «արիստոկրատական» արիական արժեքային համակարգի դեմ, որը և «գլխիվայր շրջեց» նրա արժեքային համակարգը: Ինչպե՞ս պատահեց, ինչո՞ւ դա դարձավ հնարավոր, մի՞թե արիական ռասան չընկալեց-չհասկացավ, որ կրոնական և բարոյական արժեքները ձևավորվում են սեփական «հողի» վրա, սեփական վախերի, տառապանքի և բավականության ապրումի արդյունքում: Շարունակելով իր միտքը՝ Նիցշեն գրում է. «Իմ պահանջը փիլիսոփաներից գիտեք՝ կանգնել բարուց և չարից անդին,- բարոյական դատողության խաբկանքը թողնել իրենցից ներքև: .... ամենևին էլ գոյություն չունեն բարոյական փաստեր»[14]: Այսինքն՝ բոլոր ժամանակներում էլ դրվել է «մարդուն վերափոխելու-բարեփոխելու» խնդիրը, և յուրաքանչյուր դարաշրջանում դա դրվել է յուրովի, ու այդ խնդրով հիմնականում զբաղվել է եկեղեցին, որը ստանձնել է «շիկահեր գազանի» ամենասքանչելի ներկայացուցիչների որսը, ամենաազնվական արիների (գերմանների) բարեփոխումը: Նիցշեն այդ ամենն ասում է գերմանացիների առնչությամբ, մինչդեռ դա վերաբերում է արիացեղ ժողովուրդներին ընդհանրապես, հետևաբար՝ նաև հայերին: Իսկ «բարեփոխված» գերմանը կամ հայը այլ բան չէր, եթե ոչ «մարդու ծաղրանկար», վիժվածք, «մեղավոր» դարձած, հիվանդ, խղճուկ, ինքն իր դեմ չարացած ինչ-որ մեկը, որ կասկածանքով էր լցված այն ամենի հանդեպ, ինչը դեռևս ուժեղ էր ու երջանիկ: Կարճ՝ դարձել էր քրիստոնյա[15]:

«Քրիստոնեական եկեղեցին ոչինչ չի թողել անաղարտ, յուրաքանչյուր արժեքից անպետքություն է ստեղծել, յուրաքանչյուր ճշմարտությունից՝ կեղծիք, յուրաքանչյուր ազնվությունից՝ հոգեկան նվաստացում»[16],- հավաստում է Նիցշեն:

Նիցշեի բարոյական իդեալը «վիկինգներն» ու գերմաններն էին՝ «շիկահեր գազանները», որոնք իրենց շնորհապարտ էին համարում Աստծուն, որ «պինդ մի սիրտ է դրել իրենց կրծքում»՝ համոզված, որ «ով մանկուց պինդ մի սիրտ չունի, բնավ չի էլ ունենա»: Մեր կատարելատիպը վահագնապաշտ Արմենական հայն էր՝ ռազմատենչ ու ազատածին, որը ոչ միայն շնորհապարտ էր Աստծուն, որ «պինդ մի սիրտ է դրել իր կրծքում», այլև կարողանում էր իր կամքը թելադրել և իր «Այո»-ն և «Ոչ»-ը պարտադրել պատմությանն ու միջավայրին:

Գիտենք՝ մեր հասարակության մեջ շատ են քրիստոնեաբարո «բարոյապաշտները», որոնք կփորձեն մեղադրել մեզ ապաբարոյականության մեջ: Միևնույն է, համակարծիք ենք Նիցշեի հետ առ այն, որ բարոյականությունը ստեղծել են թույլերը՝ ուժեղներից պաշտպանված լինելու համար, այսինքն՝ հզորներն ու ուժեղները բարոյականության խնդիր չունեն, առավել ևս՝ քաղաքականության մեջ: Ուժեղներն են, որ կարող են պատվել, կարող են սիրել ու ներել: Ծիծաղելի են թույլի սերն ու ներումը, քանի որ անհասկանալի է երևույթի հակառակ կողմը. ի՞նչ կարող էին անել՝ ներելուց ու սիրելուց բացի:

Բոլոր ժամանակներում ցանկացել են «բարեփոխել մարդուն»: Ըստ Նիցշեի՝ նախ և առաջ, սա է կոչվել բարոյականություն: Սակայն, նույն բառի տակ թաքնված են ամենատարբեր երանգներ: «Բարեփոխում» է անվանվել ինչպես մարդ գազանի հնազանդեցումը, այնպես էլ մարդու որոշակի մի տեսակի բուծումը: Կենդանու հնազանդեցումը «բարեփոխում» կոչելը

[13] Նիցշե Ֆ., Զաստվածների մթնշաղը // Նիցշե Ֆ., Ողբերգության ծնունդը և այլն, էջ 359–360:
[14] Նիցշե Ֆ., Զաստվածների մթնշաղը // Ֆ. Նիցշե, Ողբերգության ծնունդը և այլն, էջ 356:
[15] Նիցշե Ֆ., Բարուց և չարից անդին, էջ 211:
[16] Ницше Ф., Антихрист, Спб., 1907, с. 151:

մեր ականջին գրեթե իբրև կատակ է հնչում: Ով տեղյակ է, թե ինչ է կատարվում գազանանոցներում, կասկածում է, թե գազանն այնտեղ «բարեփոխվում» է. նրան թուլացնում են, պակաս վտանգավոր դարձնում, և նա սարսափի ընկճող գրգիռների, ցավի ու սովի միջոցով դառնում է հիվանդագին գազան: Նույնը տեղի է ունենում հնազանդեցված մարդու դեպքում, որին բարեփոխել է «քուրմը» կամ հոգևորականը: Վաղ միջնադարում, երբ եկեղեցին, իրոք, «գազանանոց» էր հիշեցնում, ամենուրեք «շիկահեր գազանի» ամենասքանչելի նմուշների որսով էին զբաղված, «բարեփոխում էին», օրինակ, ազնվական գերմանացիներին: Բայց դրանից հետո ինչպիսի՞ տեսք էր ունենում «բարեփոխված» գերմանը: Նա դառնում էր մարդու ծաղրանկար, վիժվածք, «մեղավոր», հայտնվում էր վանդակում՝ արգելափակվելով համակ զարհուրելի հասկացությունների մեջ… Եվ ահա նա պառկում էր՝ հիվանդ, խղճուկ, ինքն իր դեմ չարացած: «Բնախոսականորեն ասած՝ գազանի դեմ պայքարում գազանին թուլացնելու միակ միջոցը նրան հիվանդ սարքելը կարող է լինել: Եկեղեցին հասկացավ սա. այն փչացրեց մարդուն, այն թուլացրեց նրան,- սակայն տարփողեց, թե «բարեփոխել» է նրան»[17]:

Դեռևս XVII դարում ֆրանսիացի նշանավոր մաթեմատիկոս, փիլիսոփա և աստվածաբան Բլեզ Պասկալը ստիպված էր արձանագրել. «Հիվանդությունը քրիստոնյայի բնական վիճակն է, քանի որ նա մշտապես պետք է ապրի որպես հիվանդ. առանց հարստության, առանց զգայական հաճույքների, առանց արժանապատվության, առանց շահի, մահվան անընդհատ սպասումով»[18]:

Քրիստոնեական եկեղեցին այդ ամենը կատարեց Արմենական ցեղի հանդեպ: Նա, ով իր ծագումնաբանությունը կապում էր տիեզերքի բուռն երկունքի հետ, երբ երկինքը, երկիրն ու ծովը բռնկվել էին երկունքի ցավերով, ծնվում էր նա, ով, ըստ քրիստոնեության հաղթարշավը նկարագրող Ագաթանգեղոսի, բնութագրվում էր որպես «Վիշապաքաղ»[19], որը հաղթելու էր խավարի ու չարության հովանավոր վիշապներին, քրիստոնեության արդյունքում «բարեփոխվեց», դարձավ «մեղավոր», հնազանդ, հանդուրժող, նվաստ, այսինքն՝ հիվանդ, խղճուկ, ինքն իր դեմ չարացած, ինչպես ասում է Դ. Դեմիրճյանը[20]:

Հայի էությանը և հոգեբանությանը քաջագիտակ Հակոբ Պողոսյանն իր միանգամայն արժեքավոր «Հայ հոգեբանության ներածություն» աշխատության մեջ, անդրադառնալով քրիստոնեության ունեցած ազդեցության խնդրին, գրում է. «Մեր պատմութիւնը կը վկայէ թէ Հայ ցեղը, մինչեւ քրիստոնեութիւն ընդունիլը ռազմասէր եղած, յաղթութիւններ տարած ու դրացի ժողովուրդներուն հետ դաշնակցութիւններ կնքած է, եւ սակայն, երբ որ քրիստոնեութիւնը, առանց իր միջավայրին յարմարեցնելու ընդունած է, այն ատեն տուժած է քաղաքականապէս»: Պատճառը, ըստ նրա, այն է, որ Քրիստոսի անհուն սիրո հետ մեկտեղ, Սինայի ահարկու և ռազմաշունչ Աստվածն էլ չի քարոզվել. «Վկայ՝ այն հայերը, որոնք քրտացած ըլլալով պահած են իրենց քաջութիւնը եւ յարձակողականութիւնը»[21]: Թերևս, հենց այս հանգամանքը նկատի ունենալով էր Հայկ Ասատրյանը գրում, թե հայերը ճիշտ չեն հասկացել քրիստոնեությունը՝ որպես ելակետ ընդունելով Նոր Կտակարանը և մոռացության մատնելով Հին Կտակարանի պահանջները: Մինչդեռ Հիսուսն ասում է. «Մի՛ կարծեք, թե ես եկա Մովսեսի Օրենքը կամ մարգարեների ուսուցումները ջնջելու. չեկա ջնջելու, այլ լրացնելու»: Բնականաբար, ինքը չի մերժում նաև Մովսեսի պատվիրանն առ այն, թե «Աչքի փոխարեն աչք պիտի հատուցես, ատամի փոխարեն՝ ատամ»: Երբ դու արդեն կարող ես հատուցել քո թշնամուն, այնժամ Հիսուսի մեծահոգությամբ կարող ես նաև չհակա-

[17] Նիցշե Ֆ., Հաստվածների մթնշաղը // Ֆ. Նիցշե, Ողբերգության ծնունդը և այլն, էջ 357:
[18] Блез Паскаль, https://www.imath.kiev.ua/~golub/aforcollect/APHOR/THEME/death.htm
[19] Ագաթանգեղոս (1914), Պատմություն հայոց, Թիֆլիս, էջ 410:
[20] Դուք երբևիցե տեսել եք տաժանակիր աշխատանք կատարող հայի: Մեջքին մի սար բեռ, ճկում է, մեջքը կոտրում. դու չես կարող հասկանալ նա աշխատանք է կատարում, թե ինքնախորտակում: Ում դեմ է այդպես չարացել, որ ինքն իրեն է պատժում: - Դ. Դեմիրճյան, Հայը, https://mocak.am/24652/դերենիկ-դեմիրճյան-հայը/
[21] Պողոսեան Հ., Ներածութիւն հայ հոգեբանութեան, Գահիրե, 1958, էջ 66:

ռակվել քեզ չարիք անողին և «աջ երեսիդ ապտակ» տվողին մյուս երեսդ դարձնել, կամ «քեզ դատի կանչողին»՝ շապիկիդ հետ մեկտեղ բաճկոնդ էլ տալ (Մաթ. 5, 38-41):

Անդրադառնալով քրիստոնեության ընդունման անհրաժեշտության խնդրին՝ Հայկ Ասատրյանն իր ուշագրավ հոդվածներից մեկում հավելում է. «Տրդատն ու Լուսաւորիչը, տեսականօրէն, խնդրին մօտեցան հմտութեամբ, գործնականում, սակայն, մատնուեցին՝ ճակատագրական մի սխալանքի:

Նրանք, ըստ արժանւոյն, ըմբռնել էին իրենց ժողովրդի հոգեբանութեան շեշտուած մէկ գիծը – հոգեկան կենտրոնացման բարձր ընդունակութիւնը, սակայն անտեսել էին քրիստոնէական ուսմունքի յատկանշական մէկ տրամադրութիւնը – աշխարհաքաղաքացիութիւնը (կոսմոպոլիտիզմ):

Իբրեւ աշխարհային ցաւի փիլիսոփայութիւն՝ քրիստոնէական վարդապետութիւնը պատշաճում էր հայկական տառապապաշտ ոգուն, որով՝ նոր կրօնը մեր ցեղի հոգեկան կենտրոնացման ընդունակութեան շնորհիվ, կարճ ժամանակում կարող էր դառնալ ժողովրդական հոգեբանութիւն: Այդպէս էլ եղաւ:

Իբրեւ աշխարհաքաղաքացիական ուսմունք, սակայն, քրիստոնէութիւնը չէր համապատասխանում հայու քաղաքական երազանքներին եւ խորթ էր հայ ժողովրդի անջատական հոգեբանութեան»[22]:

«Չէր համապատասխանում» քաղաքական երազանքներին, ամենևին էլ չի նշանակում անհաղորդ մնալ հայ ժողովրդի հոգեբանությանը կամ մերժվել նրա կողմից: Ուղիղ հակառակը:

Այս հակասության հետևանքով քրիստոնեությունը, ինչպես նկատում է Հ. Ասատրյանը, Հայաստանի պատմությունը դրեց «առեղծվածային մի շրջանակում» և ծնունդ տվեց տարբեր երանգներով և փոփոխականներով արտահայտվող կամ կերպավորվող, բայց ամբողջ անցյալում մեր կյանքի ընթացքը դրոշմող ողբերգությունների մի շղթայակցության. «Սկզբում՝ պայքար ազգի քաղաքական եւ հոգեւորական հաստատութեանց միջեւ, ապա՝ պայքար ազգայնացուած միաբնութենական եւ արեւմտեան ընդհանրական երկբնութենական դաւանական ըմբռնելակերպերի միջեւ, միւս կողմից՝ պայքար հայ-քրիստոնէական միարմատեան (մոնիստական) գաղափարապաշտութեան եւ պարսկա–զրադաշտական երկարմատեան (դուալիստական) ներգործապաշտութեան միջեւ, աւելի ուշ՝ պայքար քրիստոնէական բանապաշտութեան (ռացիոնալիզմ) եւ իսլամական զգայապաշտութեան (սենսուալիզմ) միջեւ… Այս բոլոր ոգորումները մէկ յայտարարի բերելով, յստակօրէն պիտի տեսնենք, որ հայոց ողբերգութիւնը պայմանաւորւում է ազգայնականի եւ աշխարհաքաղաքացիականի անհերդաշնակութեամբ եւ հակամարտութեամբ՝ նախ հայ ոգում եւ ապա՝ հենց դրա հետեւանքով՝ պատմութեան մարզում»[23]:

Ընդհանրացնելով կարող ենք ասել, որ «հայոց ողբերգությունը» պայմանավորված է նպատակի բովանդակային անորոշությամբ, չասելու համար՝ սնանկությամբ կամ բացակայությամբ: Եթե նպատակը սահմանում ենք որպես մարդու (կամ մարդկային հանրույթի) գործունեության վերջնական արդյունք, որտեղ միավորվում են անհատի (կամ հանրույթի) նախնական իդեալական պատկերացումները և դրանց հասնելու համապատասխան միջոցների ու գործողությունների ամբողջությունը, կարող ենք ասել, որ նպատակի հասկացությունը մարդկային գործունեության մեջ ամենահիմնականներից մեկն է, յուրաքանչյուր անհատի (կամ հանրույթի) կյանքի ուղեցույցը՝ ո՞ւր ենք գնում և ինչո՞ւ: Եթե նկատի առնենք, որ, քրիստոնեության տեսանկյունից, Տիեզերքում գոյություն ունի որոշակի նպատակահարմարություն, ըստ որի՝ յուրաքանչյուր գոյավոր ունի իր կեցության իմաստն ու նպատակը, ուրեմն՝ պարտավոր ենք միջնադարի մեծագույն աստվածաբաններից մեկի՝ Թովմա Աքվինացու նման հայտարարել, որ պետք է գոյություն ունենա նաև մի բարձրագույն բանական էակ, որը նպատակահարմար ձևով ստեղծում և կառավարում

[22] Ասատրյան Հ., Հայոց գրաւոր ստեղծագործութեան էութեան մասին //Հ.Ասատրյան, Հատընտիր, Եր., 2004, էջ 69:
[23] Նույն տեղում, էջ 69:

է բոլորին, և այդ բարձրագույն էակը չի կարող լինել ուրիշ մեկը, բացի Աստծուց: Այսինքն՝ Աստված է սահմանում կեցության, նաև ազգերի ու ժողովուրդների նպատակը: Հետևաբար՝ Ազգային նպատակը սոսկ յուրաքանչյուր ժողովրդի միասնական կամքի արտահայտությունն ու մարմնավորումը չէ, այլ նրա դավանած Աստծո ծրագիրը: Իսկ դա ենթադրում է, որ «Քո էութիւնից պիտի բղխի աստուածապաշտութիւնը, այնպէս, որպէս թէ տիեզերքի բացարձակ կամքն է գործում քո մէջ»: Այդ դեպքում, ինչպես ասում է Հ. Ասատրյանը, Աստված այլ բան չէ, քան «խղճմտանքի յղացումը»: Իսկ դա նշանակում է, որ «առանց Աստուծոյ՝ դու ոչինչ ես, իսկ առանց քո խղճմտանքի արթնութեան՝ չկայ Աստուած»: Ընդհանրացումը, որ անում է Հ. Ասատրյանը, մտահոգող է. եթե «Աստուծոյ հետ ես, պատմաստեղծ ես», իսկ եթե նա քեզանից դուրս է, «ապա դա զինակիցն է ուրիշների, եւ նրանք քեզ հետ կվարուեն որպէս անոգի առարկայի»: Միանգամայն այլ խնդիր է, որ «Դու կարող ես եւ աստուածապաշտ լինել եւ սակայն անհաղորդ մնալ Աստծուն»[24], հատկապես, եթե դա չի բխում քո պատմությունից, քո էությունից և քո «խղճմտանքի յղացումը» չէ…

«Երկար ժամանակ հայի իմացական իդէալը եղաւ՝ հասկանալ «Նարեկ»-ը: Հասկացա՛ւ. նա թութակեց «ողբաձայն» մրմունջը, խարխափեց խորքի, իմաստի եզրին, գալարուեց բանականութեան վիժած առեղծուածների ցանցում եւ մի օր էլ ընդմիշտ մոլորուեց իր էութեան անդունդներում: Աստուածն այլեւս մեր կամքի զինակիցը չէր, այլ՝ մեր մոլորանքների քննադատը: Պատմութեան փառքի գծից շեղածը, ենթագիտակցօրէն, իրեն ծուած է զգում Աստուծոյ ճանապարհից: Նմանի համար Աստուածն այլեւս առաջնորդ չէ, այլ միայն «տեսող գաղտնեաց»[25],- գրում է Հ. Ասատրյանը, ապա շարունակում. «Հայն է հիւսել աշխարհի ամենասպանիչ, գոյութեան տենչի ժխտումին համահաւասար «Մեղա»-ն: Պատուհասելու սարսափից, նա իր հաւատի պարարտութիւնը ճենճերելով՝ բուրուառեց երկնքին – ներսից այրուեց, ծուխը տուեց քամիներին եւ դատարկուեց իր էութեան ոյժերից»: Դրանով է հեղինակը բացատրում մեր ազգային ողբերգությունը՝ ցեղասպանությունը և հայրենազրկումը, որոնք հնարավոր դարձան, քանի որ «մինչեւ այդ՝ մեր կեանքում ամէն ինչ սկսւում էր ցաւով, շարունակւում՝ ողով, վերջանում՝ աղօթքով: Մենք շուռ եկած էութիւն էինք եւ տառապանքի ծարաւ: Մենք յիշողութեամբ էինք միայն տարօնական (այսինքն՝ հայ – Յու. Հ.), բայց ո՛չ կենդանի զգացումով: Դրա համար էլ մեր կեանքը քաւութեան բաղձանք էր միայն եւ անստեղծագործ տանջանք – նահատակութեան սարսուռ եւ երկիւղած թերահաւատութիւն»[26]: Հայի համար «Տեր ողորմեան» փրկության ակնկալությունն է՝ «Հա՛ս յօգնութիւն ծառայից Քոց, Անօգնական ազգիս Հայոց», այսինքն՝ փրկիր արտաքին թշնամիներից և պահպանիր մեզ և ո՛չ ամենևին «ներում» կամ «քավություն»՝ կատարած մեղքերի կամ անօրինությունների համար, ինչպիսին անգլիացու կամ գերմանացու դեպքում է[27]:

Աստված դադարեց մեր զինակիցը լինել այն օրից, երբ ինչ-որ օտար աստծո անունից ավերեցինք մեր ազգային աստվածների տաճարները: Աստված չի կարող զինակից լինել տաճարներ ավերող մոլորյալների… Աստվածները չեն ներում ուրացումի որևէ դրսևորում, անկախ նպատակից, քանի որ, գոնե նրանց դեպքում, բարոյական նպատակը ենթադրում է դրա իրագործման բարոյական միջոցներ: Թերևս, հենց դա նկատի ուներ հանճարեղ Կանտը, երբ ասում էր. «Սարսափելի է Աստված՝ առանց բարոյականության»:

«Հայ էութեան մէջ շեշտուած է ոգու ողբերգական պառակտումը: Նարեկացու հոգում կռւում են էմպիրիկ կեանքի խորին զգացումը եւ գիտնականի տանջող մտածումը – միստիցիզմը եւ լոգիզմը, քաղաքական անիշխանականութիւնը եւ

[24] Ասատրյան Հ., Հատընտիր, էջ 107:
[25] Ասատրյան Հ., Հատընտիր, էջ 108:
[26] Նույն տեղում:
[27] Միանգամայն տարբեր է «Տերունական աղոթքի» բովանդակությունը տարբեր ազգերի համար: Քննարկման ուշագրավ թեմա է, որին այստեղ չեմ անդրադառնում զուտ հոդվածի հնարավորության սահմանափակումների պատճառով:

կրօնական աբսոլուտիզմը, սիրտը եւ բանականութիւնը… Առհասարակ, հայի մէջ ներդաշնակ չեն կուլտուրաստեղծ էներգիան եւ քաղաքական զգացումը: Հենց Նարեկացին մի Ֆաուստ է, 10-րդ դարում, համակուած Գէոթէի ասած «երկու հոգիների պայքար»-ով»,- գրում է Հ. Ասատրյանը[28]: Ըստ նրա՝ թերևս, դրանով է բացատրվում, որ քրիստոնեության հաստատումից հետո մինչև այսօր էլ դա «անյաղթահարելի անէծքի պէս ճմլում է մեր սիրտը»[29]:

Արդարացի լինելու համար նկատենք, որ նախաքրիստոնեական շրջանում նույնպես առկա էր հակամարտություն, որն արտահայտվում էր իրանական և հելլենական մշակույթների բախումով: Հայաստանը դարձել էր հելլենիստական մշակույթի պահպանման ու զարգացման կարևոր կենտրոններից մեկը դեռևս Տիգրան Մեծի իշխանության տարիներին: Տիգրանը ձգտում էր հելլենիստական մշակույթը ծառայեցնել ներպետական ու արտաքին քաղաքական խնդիրների լուծմանը՝ դա վերածելով քաղաքական կարևորագույն գործոնի: Նա ցանկանում էր հոգևոր այդ հիմքի վրա միավորել ու համախմբել երկրի տարբեր ժողովուրդներին, տոհմերին ու ցեղերին, ստեղծել նոր էթնոսոցիալական ամբողջություն, նրանց ներառել «համակեցության միասնական ռիթմի մեջ», ինչը, ռազմական և տնտեսական ներուժի հետ մեկտեղ, պետք է ապահովեր Հայաստանի ներքին ամբողջականությունը, ռազմաքաղաքական հզորությունը, պետական կառույցների ամրությունը և առաջնակարգ դերը միջազգային հարաբերությունների ասպարեզում: Բնավ պատահական չէ, որ Տիգրան Մեծին համարում են «հելլենիստական վերջին մեծ միապետը»[30]: Ցավոք, նրան չհաջողվեց մինչև վերջ իրագործել նախատեսած վիթխարի ծրագիրը: Իսկ քրիստոնեությունն իր մուտքով ավելի խորացրեց այդ հակամարտությունը՝ պառակտելով և հատվածականացնելով նախ՝ մեր ազգային Ոգին, իսկ հետո նաև միասնական մարմինը:

Ամերիկայում հաճախ հեգնանքով ասում են. «Արեւելքի մէջ կրօնքը ազգութիւն է»[31],- գրում է Հ. Պողոսյանը, և դրանում որոշակի ճշմարտություն կա: Ավելին, դա չի սահմանափակվում միայն Արևելքով: Դրա լավագույն ապացույցը հարավսլավոնական ժողովուրդներն են, մասնավորապես՝ կաթոլիկ խորվաթները՝ լատինական գրաֆիկայով, ուղղափառ սերբերը՝ կիրիլիցայով և մահմեդական բոսնիացիները՝ հռոմեական գրաֆիկայով: Այդ երեք ժողովուրդները սկսեցին իրարից հեռանալ կրոնական տարբերությունների պատճառով, և նրանց միջև առկա ընդհանրությունները, նույնիսկ ընդհանուր ծագումնաբանությունն ու պատմական հիշողությունը, քաղաքական միևնույն կառույցի մաս կազմելը[32] չմիավորեցին նրանց: Նույնը կարող ենք ասել նաև սլավոնական մյուս ազգերի՝ կաթոլիկ լեհերի և ուղղափառ ռուսների մասին: Վլադիմիր Սոլովյովը, խոսելով ռուս-լեհական հարաբերությունների մասին, նկատում է, որ թեպետ ռուսական կառավարումը Լեհաստանի համար ապահովել է այնպիսի հասարակական-տնտեսական բարեկեցություն, որին նա չէր կարող հասնել ո՛չ գերմանական և ո՛չ էլ ավստրիական տիրապետության օրոք, այնուամենայնիվ, «լեհ հայրենասերներն ավելի շուտ կհամաձայնեն խեղդվել գերմանական ծովում, քան անկեղծորեն հաշտվել Ռուսաստանի հետ», իսկ դա նշանակում է, որ թշնամանքի պատճառներն ավելի խորն են՝ հոգևոր բնույթի: Լեհաստանն այն հոգևոր սկզբի ներկայացուցիչն է, որն արևմտյան պատմության հիմքում է: Լեհ ազգը և ամբողջ կաթոլիկ սլավոնականությունը իրենց հոգևոր էությամբ սահմանակցված են եղել արևմտյան աշխարհին, իսկ ոգին արյունից ավելի ուժեղ է. գերմանացիների հանդեպ արյան հակակրանքով և ռուսների հանդեպ արյան մերձավորությամբ հանդերձ, լեհականության ներկայացուցիչներն ավե-

[28] Ասատրյան Հ., Հատընտիր, էջ 120:
[29] Նույն տեղում, էջ 70:
[30] А. А. Степанян, Развитие исторической мысли в Древней Армении. Ер., 1991. С. 95.
[31] Պողոսեան Հ., Ներածութիւն, էջ 326:
[32] Այդ ժողովուրդներն ընդգրկվեցին նախ՝ Հարավսլավիայի թագավորության (1918-1945), իսկ հետագայում՝ Հարավսլավիայի Սոցիալիստական Դաշնային Հանրապետության կազմում (1945-1991):

լի շուտ կհամաձայնեն գերմանացմանը, քան Ռուսաստանի հետ ձուլմանը: Արևմտաեվրոպացին, նույնիսկ բողոքականը, հոգեպես ավելի մոտ է լեհ կաթոլիկին, քան ուղղափառ ռուսը[33]:

Այդ ամենն իմանալով հանդերձ, քրիստոնեական ընդհանրական եկեղեցին ամբողջությամբ խճճվեց դավանաբանական և ծիսակարգային տարրմբռնումների շուրջ բանավեճերի թնջուկի մեջ, որի հետևանքով միասնական ու միադավան քրիստոնեական եկեղեցին պառակտվեց միաբնակ, երկբնակ, կաթոլիկ, բողոքական և այլ եկեղեցիների, որոնցից յուրաքանչյուրը փորձում էր հիմնավորել իր ճշմարտացիությունն ու գերակայությունը՝ որոշ դեպքերում նույնիսկ ժխտելով մյուսների գոյության իրավունքը: Դավանաբանական և ծիսակարգային հակամարտությունները խորանալով՝ աստիճանաբար վերածվեցին անհանդուրժողության և թշնամանքի: Նման անհանդուրժողության և թշնամանքի պատճառով կործանվեցին ոչ միայն Արծրունիների և Բագրատունիների իշխանապետություններն ու Կիլիկիայի թագավորությունը, այլև Բյուզանդական կայսրությունը: «Հայ-ռուսական եկեղեցական հարաբերությունների պատմության շուրջ» հոդվածում Գ. Աբգարյանը բերում է մի հատկանշական օրինակ համայն Ռուսիո միտրոպոլիտ Կիպրիանի (1330-1406) վերաբերյալ: Ռուսաստանում որպես Բյուզանդիայի ներկայացուցիչ հանդես եկող այս եկեղեցական գործիչը գրել է. «Հայկական աղանդը բոլոր աղանդներից ամենանողկալին է»: Չնայած որոշ հեղինակներ փորձում են հիմնավորել, որ «հայկական աղանդ» ասելով Կիպրիանը նկատի է ունեցել պավլիկյան աղանդը, սակայն սլավոնական մատենագրության մեջ, ինչպես նշում է Գ. Աբգարյանը, պավլիկյանները կոչվում էին հենց «պավլիկյան», հետևաբար՝ «հայկական աղանդի» ներքո հասկացվել է հայոց դավանանքը, որը գրգռում էր ոչ միայն հռոմեական, այլև ուղղափառ եկեղեցիներին: Այդ անհանդուրժողականությունն առկա էր նաև նախորդ դարերում: Հայ-վրացական հարաբերությունների ծաղկունքի օրերին ազգությամբ հայ Իվանե սպասալարը (զորապետը) իր ազգակիցներին սպառնում էր վրացադավան, այսինքն՝ ուղղափառ դարձնել: Թշնամանք հրահրողը դարձյալ բյուզանդական եկեղեցին էր: Մխիթար Գոշը Զաքարե և Իվանե սպասալարներին ուղղված թղթում բերում է վրաց կաթողիկոսին հասցեագրված իր նամակը, որտեղ ինքը վերջինիս հայտնում է, որ հույներն են սովորեցրել վրացիներին հայերին համարել ավելի վատթարը, քան տաճիկներն ու հրեաներն են. «Տաճիկն ու ջահուդն լավ է, քան զհայն, և այդ ի հոռոմէն եք լսել» («Արարատ», 1900, էջ 498): Այժմ ԽՍՀՄ (ՌԴ) գիտությունների ակադեմիայի գրադարանում պահվող մի անտիպ ձեռագրում (էջ 490 բ) կարդում ենք (թարգմանված է հին սլավոներենից). «Եթե քրիստոնյան նրանց եկեղեցու մոտով անցնի (իբր՝ հայերը քրիստոնյա չեն - Գ.Ա.), և նրանք երգելիս լինեն, պետք է ականջները փակելով փախչի, որպեսզի ձայնը չմտնի ականջները»[34]:

Երկար ժամանակ մեզանում ազգության հիմք է համարվել Հայ առաքելական եկեղեցին: Դա, առաջին հերթին, պայմանավորված էր ազգային պետության բացակայությամբ: Եկեղեցին ոչ միայն Աստծո տաճար էր, այլև հայրենիք: Այդ դիրքորոշումը, որը արմատավորվեց քրիստոնեության պետականացումով, հատկապես խորացավ արաբական և օսմանյան տիրապետության տարիներին: Օսմանյան կայսրությունը կրոնապետություն էր, իսկ կայսրության մեջ ապրող ժողովուրդները՝ կրոնական համայնքներ: Սուլթանները դրանով լուծում էին երկու շատ կարևոր խնդիրներ: Նախ՝ միավորում էին կայսրության սահմաններում ապրող միանգամայն տարբեր ծագումնաբանություն, պատմություն, մշակույթ և լեզու ունեցող ժողովուրդներին՝ մահմեդականության հիմքի վրա (համիսլամիզմի գաղափարախոսություն), և ինչպես ասում էր Աբդուլ Համիդը. «Մեր պետությունը կրոնական պետություն

[33] Соловьев В., Национальный вопрос в России. М., «Хранитель», 2007, с. 24–25:
[34] Աբգարյան Գ., Հայ-ռուսական եկեղեցական հարաբերությունների պատմության շուրջ, https://arar.sci.am/dlibra/publication/269858/edition/247245/content

է, եթե իսլամի միության գաղափարը վերջացավ, մեր պետությունն էլ կվերջանա»[35]: Երկրորդ՝ նրանք հակադրում-բաժանում էին նույնիսկ նույն ծագումնաբանությունը, պատմությունն ու մշակույթը ունեցող ժողովուրդներին՝ դավանաբանական առանձնահատկությունների հիման վրա: Պատահական չէ, որ թուրքական սուլթանների քաղաքականությանն ու դիվանագիտությանը քաջածանոթ հեղինակները նրանց ուժի գաղտնիքը տեսնում էին քրիստոնյաներին բաժանելու և միմյանց դեմ հակադրելու մեջ: Այդ քաղաքականությունն էր վարվում նաև հայ ժողովրդի հանդեպ: Այն դեպքում, երբ հալածվում էր Հայ առաքելական եկեղեցին, տարաբնույթ արտոնություններ էր շնորհվում Հայ կաթոլիկ, ուղղափառ և ավետարանական եկեղեցիներին: 1829 թ. անգլիական և ֆրանսիական իշխանությունների ճնշման տակ օսմանյան իշխանությունները Ադրիանապոլսի պայմանագրի 12-րդ կետով հայ կաթոլիկներին շնորհեցին «կաթոլիկ ազգի» (կաթոլիկ միլլեթ) կարգավիճակ և վարչական ինքնավարություն՝ սեփական արքեպիսկոպոսի գլխավորությամբ, իսկ 1847 թ. սուլթանի կայսերական հրամանագրով որպես օրինական ազգ (միլլեթ) ճանաչվեց նաև բողոքական հայությունը (Հայ ավետարանական եկեղեցի): Իհարկե, քիչ չէին այն մտածողները, որոնք ազգությունը չէին կապում եկեղեցու և նրա դավանաբանության հետ և, ինչպես Սիմոն Երեմյանը, «միջնադարյան գաղափար» էին անվանում այդպիսի ըմբռնումը: Այնուամենայնիվ, դա ունեցավ իր բացասական հետևանքները, որը, ցավոք, զգացվում է նույնիսկ հիմա՝ XXI դարում, երբ կաթոլիկ հայերին անվանում են ֆրանկներ (ֆրանսիացի), բողոքականներին՝ գերմանացիներ կամ անգլիացիներ, ուղղափառներին՝ ռուսներ կամ հույներ՝ պայմանավորված եկեղեցու առանձնահատկություններով, իսկ մահմեդական հայերին՝ թուրքեր:

Ցավալի է, սակայն փաստ է նաև այն, որ մեր եկեղեցին հաշտ չգտնվեց ինքն իր հետ: XX դարի կեսերին Հայ առաքելական եկեղեցին տարբաժանվեց զուտ քաղաքական հիմքի վրա: Չի կարելի ասել, թե քաղաքական և եկեղեցական այն այրերը, որոնք բաժանեցին Հայ եկեղեցին, տեղյակ չէին, որ «Եկեղեցու տրոհումը աստվածային պատիժ է և ոչ թե Աստծո կամքը: Աստծո կամքն անփոփոխ է. թող միասնական լինի հոտը և միասնական լինի հովիվը»[36]: Կամ չգիտեին արդյո՞ք, որ «կրոնական փոքրիկ խնդիր մը մեծ խրամատ մը կը բանայ հայութեան միջեւ», որը հետագայում դժվար է լինելու լցնելը: Գիտեին: Նրանք դա լավ էին հասկանում, և եկեղեցին բաժանեցին գիտակցաբար, մի կողմից իրենց քաղաքական ազդեցությունը ամրապնդելու, իսկ մյուս կողմից՝ Էջմիածնի, հետևաբար նաև Հայաստանի Հանրապետության ազդեցությունը սփյուռքահայության վրա թուլացնելու նպատակով[37]:

Մենք, իհարկե, հեռու ենք ծայրահեղականությունից, ավելին, գիտենք, որ կաթոլիկ Մխիթարյանները կարող են Ալիշան, Պեշիկթաշլյան կամ Դանիել Վարուժան ծնել, իսկ Հայ Ավետարանական եկեղեցին՝ Մ.Ս. Գաբրիելյան[38], սակայն, կասկածից դուրս է, որ նման մտածողության մեջ կա որոշակի ճշմարտություն: Այդ մասին է վկայում նաև լեհահայ գաղթօջախի պատմությունը: Դեռևս XI–XV դարերում Լեհաստանում ապաստան գտան մեծ թվով հայեր, որոնց թիվը XVII դարի կեսերին հասնում էր գրեթե չորս հարյուր հազարի: Նրանք լիովին ձուլվեցին լեհերին, թեպետ իշխանությունների կողմից տրված բազմաթիվ արտոնություններին (ազգային դպրոց, հիվանդանոց, եկեղեցի ունենալու իրավունք): Դրա հիմնական պատճառը զանգվածային դավանափոխությունն էր, որի սկիզբը դրվեց դեռևս 1550-ական թվա-

[35] Ըստ «Հորիզոնի», 1913, թ. 41:

[36] Вл. Соловев, Национальный вопрос в России. М.: 2007, с. 50:

[37] Այս մասին ավելի հանգամանորեն տես Հովականյան Յու., Կրոնի և եկեղեցու դերը ազգերի ձևավորման ընթացքում, «Բանբեր ՀՊՏՀ», 2012, N 3, էջ 143–157:

[38] Գաբրիեյան Սմբատ Մխիթար, ամերիկահայ բժիշկ, ցեղաբան և փիլիսոփա, խմբագրել է «Հայք» ազգային, քաղաքական և առողջաբանական թերթը, բազմաթիվ աշխատությունների հեղինակ է, այդ թվում՝ բժշկագիտական: Արժեքավոր աշխատություններից են «Հայկական ճգնաժամը և վերածնութիւնը», Պոսթոն, 1905 և 1909, «Հայ ցեղը: Ազգային ատենախոսություններ», Նյու-Յորք, 1911, ինչպես նաև անտիպ աշխատություններից՝ «Հայերեն լեզուի փիլիսոփայութիւնը». «Գիտութիւն, փիլիսոփայութիւն, կրօնք» և այլն:

[39] Տես Պետրովիչ Գ., Լեհ կղերին միութենական փորձերը և լեհահայերը (1550-1690), «Հանդես ամսօր-եա», Վիեննա, 1968, N 7–9, էջ 294–316:

կաններին:[39] Առաքել Դավրիժեցու վկայությամբ, երբ հայոց կաթողիկոսի նվիրակ Խաչատուր Կեսարացին Լվովի եկեղեցում նզովեց Էջմիածնից այդտեղ փախած Ն. Թորոսովիչին և դուրս եկավ այնտեղից, եկեղեցին լքեցին նաև լեհահայ ավագանին, հոգևորականությունն ու ժողովուրդը: Ն. Թորոսովիչն այս քայլին պատասխանեց՝ ընդունելով կաթոլիկություն[40]:

Անկասկած, լեհահայ գաղութը ժամանակի ընթացքում աստիճանաբար ձուլվելու էր, և այս հարցում հակառակը պնդելը միամտություն է, սակայն ազգադավ մի եպիսկոպոս արագացրեց այդ գործընթացը և, գրեթե հինգ հարյուր տարիների ընթացքում ձևավորված գաղթօջախի կապը կտրելով Մայր Եկեղեցուց, կարճ ժամանակում ձուլեց նրան՝ դավանափոխ անելով: Եվ այս տեսանկյունից, չի կարող մտահոգիչ չհամարվել այն, որ այսօր աշխարհում հաշվվում են մոտ 600000 կաթոլիկ ու բողոքական և շուրջ 100000 ավետարանական եկեղեցու հետևորդ հայեր: Իսկ միայն Հայաստանում, որի բնակչությունը հազիվ երեք միլիոն է, հաշվվում է մոտ 350000 աղանդավորական: Սա չափից դուրս մեծ ու վտանգավոր թիվ է, հատկապես, եթե հաշվի առնենք աղանդավորականների «զոմբիացված», ապազգային և հարձակողական կեցվածքը: Այդ պատկերն ավելի անհանգստացնող է գաղթօջախներում: Այդպես էր իրավիճակը նաև անցյալ դարի 30-ական թվականներին, որի մասին Գ. Նժդեհը գրում է. «Հայկական պարտվողականությունը արտահայտվեց նաեւ հիվանդագին կրոնականությամբ: Ընդհանուր քայքայման պայմաններում հայկական գաղթօջախներում առաջացան բազմաթիվ անհեթեթ աղանդներ, «ռուհչիներ», որոնք իրենց հոգու փրկության համար քարոզում էին հրաժարվել ազգային-հասարակական կյանքից, «անդենականներ», որոնք հայերի երկրային հայրենիքը համարելով անիրական, հորդորում էին նվիրվել անդենական, երկնային հայրենիքին, «վերամկրտչականներ» նույնքան ապազգային, հակահասարակական եւ հիվանդագին: Իսկ Ստամբուլում թուրքական իշխանությունների խորհրդով կազմավորված «հայկական կոմիտեն» հայերին քարոզում էր իրենց համարել «լուսավորչական թուրքեր»: ....Մի խոսքով, սփյուռքի մեր գաղթօջախներում ստեղծվել էր մի մթնոլորտ, որում մեկ միլիոնի հասնող գաղութահայերը, ի ուրախություն թուրքերի, փորձում էին ինքնասպան լինել»[41]:

Այդպիսին է իրականությունը նաև այսօր, միայն թե մեկ տարբերությամբ, որ առնվազն մի քանի անգամ մեծացել է «ինքնասպանների» թիվը... Եվ դրանում, իր որոշակի ներդրումն ունի նաև քրիստոնեությունն ընդհանրապես և մեր եկեղեցին՝ մասնավորապես, քանի որ, ինչպես իրավացիորեն նկատում է Կոստան Զարյանը՝ «Աստուածաշնչին հաւատացողը իր մտքի մէկ մասով հրեայ է: Սաղմոսների եւ պատրիարքների պատմութիւնների ետեւ միշտ էլ նստած է փոքրիկ խանութպանը: Մովսեսը հաշուապահ էր: Դրամ, ժլատութիւն, բարեգործութիւն: Դրամ, աւետարան, եկեղեցի: Դրամ, դրամ...»[42]: Այդ ոգին իշխում է քրիստոնեության մեջ, և դրանից զերծ չէ հայ հոգևորականների ճնշող մեծամասնությունը: Թողնենք մեծ վաշխառուին՝ Պետրոս Գետադարձին: Վաշխառուի նման են գործում նաև մյուսները, իսկ առանձին սրբակենցաղ հոգևորականների համար, որոնք նույնպես քիչ չեն եղել մեր պատմության մեջ, այս վաշխառուի տեսակը պարզապես խարան է ազգի և եկեղեցու ճակատին: Այդպիսի մի քահանայի մասին խոսում է Երվանդ Օտյանն իր «Գործի մարդիկ» գրության մեջ. «Տ. Մկրտիչ «գործի մարդ» քահանա էր, որ կրոնավորութիւն կըներ վաճառականութիւն ընելու պես: Իրեն համար կրոնքը խոշոր խանութ մըն էր. տունօրինեք, խաչահանգիստ, խոստովանանք, նշանտուք, կնունք, հաղորդութիւն, ավետարան, բարի խրատ, կշտամբանք, թաղում, հարսանիք և այլ ապրանքներ էին, զորոնք պետք էր կարելի եղածին չափ սուղ ծախել և միշտ ջանալ առաջ

[40] Համբարձումյան Ռ., Լեհահայերի բռնի միության պատմության մի քանի հարցերի շուրջ, http://ysu.am/files/18R_Hambardzumyan.pdf
[41] Նժդեհ Գ., Հատընտիր, էջ 312–313:
[42] Զարեան Կ., Միացեալ Նահանգներ, «Հայրենիք», 1937, N 4, էջ 53:
[43] Օտյան Ե., Գործի մարդիկ// Երկերի ժող., 6 հ-ով, հ. I, Եր., 1960, էջ 366:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Հովականյան Յու., Կրոնի և եկեղեցու դերը ազգերի ձևավորման ընթացքում, «Բանբեր ԵՊՏՀ», 2012, №3, էջ 143-157:
2. Զաքարյան Ս., Հայոց ինքնության քրիստոնեական հարացույցը (ձևավորման և կայացման փուլ), http://lib.ysu.am/disciplines_bk/88f0ed0db-2f876b9e98d276050aa174a.pdf
3. Հոգևոր երգարան, ԱՀՔ եկեղեցի, երգ 342, http://www.ergaran.in/2016/01/342.html
4. Ագաթանգեղոս, Պատմություն հայոց, Եր., 1983:
5. Եղիշե, Վարդանի և հայոց պատերազմի մասին, Եր., 1969:
6. Фридрих Ницше 1879, "Vermischte Meinungen und Sprüche"; https://ok.ru/vsyaarmeni/topic/66912194532640
7. Հայ ժողովրդի պատմություն, հ. 2:
8. Արևշատյան Ս., Միրումյան Կ., Հայ միջնադարյան փիլիսոփայություն, մաս Ա, Հին շրջան և վաղ միջնադար, Եր., 2014:
9. Նիցշե Ֆ., Զաստվածների մթնշաղը // Ողբերգության ծնունդը և այլն:
10. Նիցշե Ֆ., Բարուց և չարից անդին:
11. Ницше Ф., Антихрист, Спб., 1907.
12. Блез Паскаль, https://www.imath.kiev.ua/~golub/aforcollect/APHOR/THEME/death.htm
13. Ագաթանգեղոս (1914): Պատմություն հայոց, Թիֆլիս:
14. Դեմիրճյան Դ., Հայը, https://mocak.am/24652/դերենիկ-դեմիրճյան-հայը/
15. Պողոսեան Հ., Ներածութիւն հայ հոգեբանութեան, Գահիրե, 1958:
16. Ասատրյան Հ., Հայոց գրաւոր ստեղծագործութեան էութեան մասին //Հատընտիր, Եր., 2004:
17. Степанян А. А., Развитие исторической мысли в Древней Армении. Ер., 1991.
18. Соловьев В., Национальный вопрос в России. М., «Хранитель», 2007.
19. Աբգարյան Գ., Հայ-ռուսական եկեղեցական հարաբերությունների պատմության շուրջ, https://arar.sci.am/dlibra/publication/269858/edition/247245/content
20. «Հորիզոն», 1913, թ. 41:
21. Պետրովիչ Գ., Լեհ կղերին միութենական փորձերը և լեհահայերը (1550-1690), «Հանդես ամսօրեա», Վիեննա, 1968, N7, 9:
22. Համբարձումյան Ռ., Լեհահայերի բռնի միության պատմության մի քանի հարցերի շուրջ, http://ysu.am/files/18R_Hambardzumyan.pdf
23. Նժդեհ Գ., Հատընտիր, էջ 312–313:
24. Զարեան Կ., Միացեալ Նահանգներ, «Հայրենիք», 1937, N 4:
25. Օտյան Ե., Գործի մարդիկ// Երկերի ժող., 6 հ-ով, հ. I, Եր., 1960:

Юрий ОВАКАНЯН
Кандидат философских наук, доцент, АГЭУ

ВИДЕНИЕ АРМЯНСКОГО ОБЩЕСТВА

ХРИСТИАНСТВО В КОНТЕКСТЕ НАШЕЙ НАЦИОНАЛЬНОЙ ТРАГЕДИИ

В профессиональной литературе национализация христианства в Армении в основном обсуждается с точки зрения сохранения государственности и национальной идентичности… Не отрицая системы ценностей христианства и ее значения в урегулировании общественных отно¬шений, роли религии и церкви в сохранении национальных ценностей - языка и культуры, следовательно и национальной идентичности, особенно при отсутствии государственности, автор пытается обосновать, что армянский национальный пантеон вовсе не исчерпал себя, следовательно, принятие христианства не было вопросом внутренней необходимости, а внешним заговором с целью уничтожения превосходства арийской расы в регионе, окончательно разрушить армянскую государственность, превратить нацию в религиозную общину с целью вытеснения армян из региона, отрезая их от родственных народов…

Ключевые слова: *нация, религия, христианство, церковь, религиозная община, гражданин мира (космополит), национальный дух, идентичность, заговор, потеря государственности, национальная трагедия*

Yuri HOVAKANYAN
PhD in Philosophy, Associate Professor, ASUE

THE VISION OF THE ARMENIAN SOCIETY

CHRISTIANITY IN THE CONTEXT OF OUR NATIONAL TRAGEDY

In the professional literature, the nationalization of Christianity in Armenia is mainly considered from the point of view of the preservation of statehood and national identity, presented as a political and cultural achievement... Not denying the role of religion and the church in the preservation of national values, language and culture, and therefore national identity, especially in the absence of statehood, the author tries to establish that our national pantheon, which was consistent with our nature, had not exhausted itself at all, therefore, there was no need to eliminate it. There was alsono need to impose Christianity. Our ideal was the Armenian worshiping Vahagn, warlike, liberating and patriotic. It was he who was able to impose his Will on History, Time and Environment and created an empire spanning from the Mediterranean to the Caspian.

The destruction of the National Cemetery, Temples and temple culture was directed against the Aryan Armenians. Christianity, according to the author, could only be the result of a foreign political conspiracy, the purpose of which was to end the dominance of the Aryan race in the region and push Armenians out of the region by cutting them off from their related peoples... Which was completely fulfilled.

Keywords: *nation, religion, Christianity, church, world citizen, national spirit, identity, conspiracy, loss of statehood, national tragedy*